360

1. Անվեհեր և հաղթող Քրիստոսով,
Դեպ առաջ Աստծո զորությամբ՝
Ավետիքի բուրմունք սփռելով
Ի մեջ խեղճ ու թշվառ մարդկության:

Քրիստո՛ս, Քո հրաշալի զորությամբ,
Արյամբ և խոսքիդ վկայությամբ
Մեզի տված ես իշխանություն,
Չարի ուժերի վրա՝ զորություն.
Այս փառքն ես պատրաստել
Քո ամեն սուրբերին,
Վստահ եմ, Հիսո՛ւս,
Քո խոստումին:

2. Հաղթության սաղմոսներ երգելով
Ցնծությամբ իմ Աստծո առաջ,
Հաղթած եմ աշխարհին հավատքով,
Քայլում եմ Փրկչիս հետ հարատև:

3. Սատանի բերդերը քանդվում են,
Երբ գնում ենք առաջ երգելով:
Ոչ մեր ուժով ու զորությունով,
Այլ Իր աստվածային Սուրբ Հոգով: